Հավելված 3

# Կ Ա Ր Գ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների մասին կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի (այսուհետև՝ պարտատոմսեր) գրավադրման և պարտատոմսերի նկատմամբ գրավի դադարման, ինչպես նաև գրավով ծանրաբեռնված պարտատոմսերի շրջանառության և մարման ընթացակարգերը:
2. Սույն կարգը տարածվում է բոլոր այն պարտատոմսերի վրա, որոնք թողարկվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի թիվ 1103 Ն որոշման, ինչպես նաև հետագայում թողարկվող և շրջանառվող պետական այլ արժեթղթերի վրա, եթե տվյալ արժեթղթերի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված կլինի, որ սույն կարգը տարածվում է տվյալ արժեթղթերի վրա:
3. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

   ա) Բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

   բ) Թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

   գ) Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող և պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագիրը պահող ու հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք: Պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը:

   դ) Ենթապահառու՝ պահառության գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որում ըստ առանձին ներդրողների՝ հաշվառվում են վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են գործակալները և դիլերները: Սույն կարգի իմաստով՝ Գանձապետական պահառուն չի հանդիսանում ենթապահառու: Գանձապետական պահառուի ներդրողներն իրենց պարտատոմսերը գրավադրելու համար պետք է դրանք նախօրոք պահատվության փոխանցեն գործակալ (դիլեր) հանդիսացող ենթապահառուի մոտ:

   ե) Գործակալ՝ յուրաքանչյուր իրավաբանական անձ, որը, համաձայն թողարկողի և բանկի հետ կնքված պայմանագրի, պարտատոմսերի շուկայում ունի գործակալի կարգավիճակ:

   զ) Դիլեր՝ յուրաքանչյուր իրավաբանական անձ, որը, համաձայն թողարկողի և բանկի հետ կնքված պայմանագրի, պարտատոմսերի շուկայում ունի դիլերի կարգավիճակ:

   է) Գանձապետական պահառու՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի անմիջական վաճառքի, ներդրողներին պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ:

   ը) Ներդրող՝ պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի պարտատոմսերը հաշվառվում են ենթապահառուի մոտ:

բ) Առևտրային բանկ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկ, որը չի հանդիսանում պարտատոմսերի գործակալ (դիլեր): Առևտրային բանկին սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը հաշվառվում են պահառուի մոտ:

ժ) Գործառնության նախաձեռնում՝ դեպո հանձնարարականի և (կամ) սույն կարգով սահմանված այլ փաստաթղթերի ներկայացում ենթապահառուին (պահառուին), որոնց հիման վրա սկսվում է տվյալ գործառնության իրականացումը:

ժա) Դեպո հանձնարարականի վավերության ստուգում՝ ենթապահառուի (պահառուի) կողմից իրեն ներկայացված դեպո հանձնարարականի ստուգում, որի ընթացքում ստուգվում է դեպո հանձնարարականի լրացման ճշտությունը և դեպո հանձնարարականի ներկայացումը համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

ժբ) Համապատասխան հաշվապահական ձևակերպումներ՝ բանկի կողմից հաստատված «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում պարտատոմսերի հաշվապահական հաշվառման մասին կարգի» համաձայն տվյալ գործառնության համար սահմանված հաշվապահական ձևակերպումներ:

ժգ) Գրավի իրավունքի այլ գրառումներ՝ ենթապահառուի (պահառուի) դեպո հաշվառման համակարգում դեպո հաշիվներով հաշվապահական ձևակերպումներից բացի կատարվող գրառումներ, որոնք ապահովում են տվյալ գրավի գործառնության հետ կապված համապատասխան գրավառուի իրավունքի հաշվառումը:

4. Պարտատոմսերի գրավատու կարող է հանդիսանալ միայն դրանց սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, այդ թվում՝ ներդրողը, առևտրային բանկը, ենթապահառու հանդիսացող գործակալը (դիլերը):
5. Պարտատոմսերի գրավառու կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ անկախ սեփականության իրավունքով իրեն պատկանող պարտատոմսերի առկայությունից: Եթե գրավառու հանդիսացող անձը չունի որևէ ենթապահառուի մոտ դեպո հաշիվ, ապա գրավի պայմանագիրը կնքելուց առաջ նա պարտավոր է գրավատուին սպասարկող ենթապահառուի կամ իր ցանկությամբ որևէ այլ ենթապահառուի մոտ բացել պարտատոմսերի դեպո հաշիվ, ինչը թույլ կտա հետագայում նույնականացնել գրավառուին և վերջինիս սպասարկող ենթապահառուին:
6. Գրավի առարկա կարող են հանդիսանալ միայն այն պարտատոմսերը, որոնց նկատմամբ գրավատուի իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի դեպո հաշվում առկա պարտատոմսերը), և որոնցով Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կարող են կատարվել գրավադրման գործառնություններ:
7. Պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրավատուի և գրավառուի միջև գրավոր պայմանագիր կնքելու և սույն կարգով սահմանված ձևով պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը գրանցելու միջոցով: Պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունները կարող են կատարվել միայն պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ամրագրող ենթապահառուի (պահառուի) միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է ենթապահառուի (պահառուի) կողմից այն գրանցվելու պահից:
8. Պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը և գրավի հետ կապված բոլոր գործառնությունների կատարումը ապահովվում են երկմակարդականի պահառուական համակարգով՝ պահառուի և ենթապահառուի կողմից ստորև նշված կանոնների համաձայն դեպո հաշիվներում համապատասխան գրառումներ կատարելով և գրավի իրավունքը հաշվառելով.

ա) գրավատուին անմիջապես սպասարկող պահառուն (ենթապահառուն) գրավադրված պարտատոմսերի հաշվառումը իրականացնում է ըստ առանձին գրավատուների՝ վերջիններիս «գրավով սահմանափակված» դեպո հաշվով, իսկ պահառուն ենթապահառուների գրավատու հանդիսացող ներդրողների գրավադրված պարտատոմսերի հաշվառումը իրականացնում է ամփոփ ձևով՝ իր մոտ վարվող «գրավով սահմանափակված» ներդրողների ամփոփ դեպո հաշվով.

բ) գրավատուին (գրավառուին) անմիջապես սպասարկող ենթապահառուն գրավի իրավունքների հաշվառումը վարում է ըստ առանձին գրավատուների, գրավառուների և գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի թողարկման համարների, իսկ պահառուն ենթապահառուների ներդրողների գրավի իրավունքների հաշվառումը իրականացնում է ամփոփ ձևով՝ ըստ գրավատուների և գրավառուների ենթապահառուների և պարտատոմսերի առանձին թողարկման համարների.

գ) ենթապահառուն համապատասխան գործառնության ձևակերպումը (գրավի իրավունքի գրառումը) կատարում է պահառուից ստացված գործառնության կատարումը հաստատող փաստաթղթի հիման վրա.

դ) պարտատոմսերի գրավադրման ժամանակ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության պարտապանը և գրավատուն կարող են լինել տարբեր անձինք, կամ գրավատուն կարող է միաժամանակ լինել գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության պարտապանը: Պահառուական համակարգը չի իրականացնում երրորդ անձ հանդիսացող պարտապանի և հիմնական պարտավորության հաշվառումը:

9. Պարտատոմսերով կարող են իրականացվել գրավի հետ կապված հետևյալ գործառնությունները՝

ա) Պարտատոմսերի գրավադրում, որի արդյունքում սահմանափակվում է պարտատոմսերն ազատ տնօրինելու գրավատուի իրավունքը, և գրավադրված պարտատոմսերի նկատմամբ ծագում է գրավառուի գրավի իրավունքը: Պարտատոմսերի գրավադրումը կարող է իրականացվել հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պարտատոմսերի գրավադրման հետ միաժամանակ գրավառուի կողմից իրականացվում է փոխառության տրամադրումը, կամ առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, երբ պարտատոմսերի գրավադրումը չի ուղեկցվում գրավառուի կողմից միաժամանակ փոխառության տրամադրմամբ:

բ) Գրավից հանում (ազատում), որի արդյունքում վերականգնվում է գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ տնօրինման իրավունքը, և վերանում է դրանց նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը: Պարտատոմսերի գրավից հանումը կարող է իրականացվել հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ, երբ պարտատոմսերի գրավից հանման հետ միաժամանակ գրավատուի կողմից իրականացվում է փոխառության մարումը, կամ առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, երբ պարտատոմսերի գրավից հանումը չի ուղեկցվում գրավատուի կողմից միաժամանակ փոխառության մարմամբ:

գ) Գրավի առարկայից հրաժարում, որի արդյունքում դադարում է գրավատուի սեփականության իրավունքը գրավադրված պարտատոմսերի նկատմամբ, և վերջիններս փոխանցվում են գրավառուի սեփականությանը առանց դատարանին դիմելու:

դ) Գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարում, որի արդյունքում գրավատուն վաճառում է պարտատոմսերը երրորդ անձին և ստացված իրացման գումարից բավարարում է գրավառուի պահանջները:

ե) Գրավի առարկայի փոխարինում, որի արդյունքում գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, և դրանց փոխարեն գրավադրվում են այլ թողարկման պարտատոմսեր:

զ) Գրավատուի փոխարինում, որի արդյունքում գրավադրված պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը:

է) Գրավառուի փոխարինում, որի արդյունքում գրավառուի գրավի իրավունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը:

ը) Գրավադրված պարտատոմսերի արգելադրում, որի արդյունքում արգելակվում է պարտատոմսերի տնօրինումը ցանկացած անձի կողմից՝ պահպանելով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը և գրավառուի գրավի իրավունքը և թույլատրելով արգելանքի տակ գտնվող պարտատոմսերի հետ կատարել գործառնություններ միայն դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշմամբ:

թ) Գրավադրված պարտատոմսերի արգելանքից հանում, որի արդյունքում պարտատոմսերից հանվում է արգելակումը, և պարտատոմսերը կարող են տնօրինվել գրավադրված պարտատոմսերի համար սահմանված կանոնների համաձայն:

ժ) Գրավադրված պարտատոմսերի փոխանցում, որի արդյունքում դատական ակտի հիման վրա պարտատոմսերի նկատմամբ կարող են վերականգնվել սեփականության և/կամ գրավի՝ մինչև արգելադրումը եղած իրավունքները կամ դադարեցվել հին և գրանցվել սեփականության և (կամ) գրավի նոր իրավունքներ:

ժա) Գրավադրված պարտատոմսերի մարում, որի արդյունքում, համաձայն պարտատոմսերի թողարկման պայմանների, իրականացվում է գրավադրված պարտատոմսերի կամ մասնակի մարման դեպքում դրանց մի մասի մարումը, դադարում են մարված պարտատոմսերի նկատմամբ բոլոր իրավունքները, և առաջանում են համապատասխան գույքային իրավունքներ մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հանդեպ:

ժբ) Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարում, որի արդյունքում, համաձայն պարտատոմսերի թողարկման պայմանների, պարտատոմսերի սեփականատերերին վճարվում է պարտատոմսերի տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը:

10. Պարտատոմսերի գրավադրումը, գրավից հանումը, գրավի առարկայի փոխանցումը, գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարումը կարող է իրականացվել միայն պահառուի (գրավատուին սպասարկող ենթապահառուի) մոտ վարվող համապատասխան դեպո հաշվի (ազատ կամ գրավադրված) մնացորդի սահմաններում:
11. Պարտատոմսերի գրավադրումը գրավառուի կողմից միաժամանակ փոխառության տրամադրման դիմաց, ինչպես նաև պարտատոմսերի գրավից հանումը գրավատուի կողմից միաժամանակ փոխառության մարման դիմաց կարող են իրականացվել միայն այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության պարտապանը և գրավատուն միևնույն անձն են, և հիմնական պարտավորությունը փողային պարտավորություն է Հայաստանի Հանրապետության դրամով: Սույն կետում նշված գործառնությունների հետ կապված հաշվարկներն իրականացվում են «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով հաշվարկների համար սահմանված կանոնների համաձայն:
12. Պարտատոմսերի մարման (մասնակի մարման) օրը մինչև մարման գործընթացի ավարտը չի կարող իրականացվել պարտատոմսերի գրամադրման հետ կապված որևէ գործառնություն:

13. Գրավի հետ կապված գործառնությունը, կախված գործառնության տեսակից, կարող է նախաձեռնվել գրավատուի, գրավառուի, հարկադիր կատարողի և (կամ) դատարանի կողմից կամ գրավատուի և գրավառուի կողմից միաժամանակ: Գրավի հետ կապված գործառնությունների կատարումը իրականացվում է գրավատուին (գրավառուին) անմիջապես սպասարկող պահառուի (ենթապահառուի կամ պահառուի) միջոցով գրավատուից (գրավառուից) ստացված դեպո հանձնարարականում նշված կատարման օրը, իսկ հարկադիր կատարողի կողմից նախաձեռնման դեպքում՝ սույն կարգով սահմանված ժամկետներում:
14. Գրավի հետ կապված գործառնությունները կարող են կատարվել սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերում նշված ցանկացած անձանց միջև՝ միևնույն ենթապահառուի տարբեր ներդրողների, ենթապահառուի և իր ներդրողի, ներդրողի և այլ ենթապահառուի, երկու տարբեր ենթապահառուների, առևտրային բանկերի, առևտրային բանկի և ենթապահառուի, առևտրային բանկի և ենթապահառուի ներդրողի միջև՝ սույն կարգով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ընթացակարգերը տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերով գրավադրման հետ կապված ինչպես իր սեփական գործառնություններին, այնպես էլ իր ներդրողների հանձնարարությամբ կատարվող գործառնություններին:
15. Ենթապահառուի համար պարտատոմսերով գրավի հետ կապված գործառնություններ կատարելու համար հիմք են հանդիսանում իր ներդրողի կողմից համաձայնեցված եղանակով ներկայացված համապատասխան դեպո հանձնարարականը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկադիր կատարողի (դատարանի) կողմից ներկայացված կատարողական թերթը (դատարանի որոշումը), սույն կարգով սահմանված դեպքերում՝ այլ փաստաթղթերը: Պահառուի համար պարտատոմսերով գրավի հետ կապված գործառնություններ կատարելու համար հիմք են հանդիսանում առևտրային բանկի կամ ենթապահառուի կողմից (այդ թվում՝ նաև իր ներդրողների հանձնարարությամբ) ներկայացված համապատասխան դեպո հանձնարարականը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկադիր կատարողի (դատարանի) կողմից ներկայացված կատարողական թերթը (դատարանի որոշումը), սույն կարգով սահմանված դեպքերում՝ նաև այլ փաստաթղթերը: Դեպո հանձնարարականները ներկայացվում են պահառուին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով: Եթե միևնույն գրավի պայմանագրով գրավադրվել են տարբեր թողարկումների պարտատոմսեր, ապա գրավի հետ կապված գործառնություններ կատարելու համար, ըստ յուրաքանչյուր պարտատոմսերի թողարկման, ներկայացվում են առանձին դեպո հանձնարարականներ:
16. Պարտատոմսերի գրավադրման, գրավից հանման, գրավի առարկայից հրաժարման, գրավադրված պարտատոմսերի մարման գործառնություններից բխող իրավունքները, գրավի պայմանագրով անձանց փոփոխությունն իրավունքներում և պարտավորություններում գրավատուների, գրավառուների և երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում պահառուի մոտ դրանց մասին համապատասխան գրառումներ կատարելու և այդ մասին համապատասխան սպասարկող ենթապահառուին տեղեկացնելու (հաստատում ուղարկելու) պահից:
17. Գրավի իրավունքը անմիջապես գրանցող պահառուն (ենթապահառուն) պարտավոր է իր հաճախորդ հանդիսացող գրավառուին տրամադրել վերջինիս օգտին գրավադրված պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք: Գրավատուին սպասարկող պահառուն (ենթապահառուն) պարտավոր է իր հաճախորդ հանդիսացող գրավատուին տրամադրել տեղեկանք իր գրավադրված պարտատոմսերի վերաբերյալ և քաղվածք գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվից: Տեղեկանքները պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքը հավաստող փաստաթղթեր են:

Գրավատուին անմիջապես սպասարկող պահառուն (ենթապահառուն) պատասխանատու է գրավի իրավունքի պատշաճ հաշվառման համար:

## ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՈՒՄ

18. Պարտատոմսերի գրավադրման գործառնության դեպքում պարտատոմսերը գրավատուի ազատ դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված դեպո հաշվի վրա՝ այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ: Եթե պարտատոմսերի գրավադրումն ուղեկցվում է դրամական միջոցների փոխանցմամբ (հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրում), ապա միաժամանակ իրականացվում է նաև դրամական միջոցների փոխանցում գրավառուից գրավատուին:
19. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ պայմաններում.
    ա) Պարտատոմսերի գրավադրումը հօգուտ գրավառուի չի ուղեկցվում միաժամանակ գրավառուի կողմից գրավատուին Հայաստանի Հանրապետության դրամով փոխառության տրամադրմամբ:
    բ) Պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնում է գրավատուն:
    գ) Եթե գործառնության նախաձեռնողը ներդրող է, ապա նա իրեն սպասարկող ենթապահառուին ներկայացնում է պարտատոմսերի գրավադրման դեպո հանձնարարական, ենթապահառուի պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված այլ փաստաթղթեր (գրավի պայմանագիր և այլն):
    դ) Գրավատուի ենթապահառուն իրականացնում է ներկայացված հանձնարարականի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը ներդրող-գրավատուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:
    ե) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը համապատասխան ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավատուին սպասարկող ենթապահառուին, իսկ գրավառուին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է գրավատուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից, որոնցով շարժ է տեղի ունեցել:
    զ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա գրավատուին (գրավառուին) սպասարկող ենթապահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

է) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:
ը) Եթե գրավատուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա գրավադրման դեպո հանձնարարականը ներկայացնում է անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի «ե», «զ», «է» ենթակետերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

20. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնություններն իրականացվում են հետևյալ կերպ՝
ա) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով փոխառության/վարկի տրամադրումը գրավատուին և վերջինիս կողմից պարտատոմսերի գրավադրումը հօգուտ գրավառու-վարկատուի իրականացվում է միաժամանակ.
բ) հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավադրման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից.
գ) գրավատուն և գրավառուն իրենց սպասարկող ենթապահառուներին են ներկայացնում համապատասխանաբար «Պարտատոմսերի գրավադրման հանձնարարականը» և «Պարտատոմսերի գրավ ընդունման հանձնարարականը», ենթապահառուի պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված այլ փաստաթղթեր.
դ) գրավատուի (գրավառուի) ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում, գրավատուի ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումը ներառում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը ներդրող-գրավատուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում, իսկ գրավառուին սպասարկող ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումը ներառում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգումը ենթապահառուի մոտ վարվող ներդրող-գրավառուի դրամական հաշվում, կամ գրավառուի դրամական հաշիվն այլ բանկում գտնվելու դեպքում՝ ենթապահառուին համապատասխան դրամական միջոցների փոխանցման կատարման ստուգումը: Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:
ե) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է վավերության ստուգում: Անվավերության դեպքում դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն փնտրում է իր կողմից ընդունված դեպո հանձնարարականների բազմությունում տվյալ հանձնարարականի զույգ հանդիսացող հանձնարարականը (զույգ հանդիսացող հանձնարարականում տվյալ գործառնությունը բնութագրող բոլոր վավերապայմանները հայելանման արտապատկերում ունեն): Համապատասխան զույգը գտնելու դեպքում պահառուն ստուգում է գրավադրվող պարտատոմսերի բավարար ծավալի առկայությունը գրավատուի ենթապահառուի համապատասխան դեպո հաշվում և դրամական միջոցների առկայությունը բանկում վարվող գրավառուի ենթապահառուի դրամական հաշվի վրա: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է դրամական միջոցների փոխանցում բանկում վարվող՝ գրավատուի ենթապահառուի

դրամական հաշվի վրա, իսկ պահառուական համակարգում՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավառուին և գրավատուին սպասարկող ենթապահառուին (ենթապահառուներին): Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

զ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա ենթապահառուն (ենթապահառուները) համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, իսկ գրավատուին սպասարկող ենթապահառուն իրականացնում է դրամական միջոցների փոխանցում գրավատուի կողմից նշված դրամական հաշվի վրա, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

է) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականները չեն կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

ը) Բոլոր այն դեպո հանձնարարականները, որոնց համապատասխան զույգերը պահառուի կողմից սահմանված ժամանակահատվածում (պահառուի գործառնական օրվա ընթացքում) չեն գտնվում, մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

թ) Եթե գրավատուն և գրավառուն սպասարկվում են միևնույն ենթապահառուի մոտ, ապա ենթապահառուն պարտատոմսերի գրավադրման հանձնարարականը ներկայացնում է պահառուին՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող դեպո հանձնարարականներն ընդունելուց հետո, իսկ պահառուի մոտ դրամական հաշվարկներ չեն իրականացվում, այլ կատարվում են միայն դեպո ձևակերպումներ:

ժ) Եթե գրավատուն և (կամ) գրավառուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի «ե», «զ», «է», «ը», «թ» ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն:

## ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԻՑ ՀԱՆՈՒՄ

21. Պարտատոմսերի գրավից հանման (ազատման) գործառնությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտատոմսերի գրավի դադարման հետևյալ դեպքերում՝

ա) երբ դադարում է հիմնական պարտավորությունը՝ պարտապանի կողմից այն կատարելու հետևանքով,

բ) երբ գրավով ապահովված պարտավորությամբ պարտքը երրորդ անձին փոխանցելիս գրավատուն գրավառուին համաձայնություն չի տվել՝ պատասխանատվություն կրելու նոր պարտապանի փոխարեն:

Գրավի դադարման այլ դեպքերում (գրավ դրված պարտատոմսերը հրապարակային սակարկություններով վաճառելու, իրականում պարտատոմսերի սեփականատերը ուրիշ անձ լինելու դեպքերում) գրավի իրավունքի դադարումը, պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կատարվում է պարտատոմսերի բռնագանձման գործառնությունների միջոցով:

22. Պարտատոմսերի գրավից հանման գործառնության դեպքում պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ դեպո հաշվի վրա՝ գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի ազատ

տնօրինման իրավունքի վերականգնումով և այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարումով: Եթե պարտատոմսերի գրավից ազատումն ուղեկցվում է դրամական միջոցների փոխանցմամբ (պարտատոմսերի գրավից ազատում հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ), ապա միաժամանակ իրականացվում է դրամական միջոցների փոխանցում գրավատուից գավառուին:

23. Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը կարող է կատարվել ինչպես գրավադրված պարտատոմսերի ողջ ծավալի, այնպես էլ դրա մի մասի նկատմամբ:
24. Առանց հանդիպակաց դրամական միջոցների փոխանցման, պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունները իրականացվում են հետևյալ պայմաններում՝

ա) գրավառուն նախաձեռնում է գրավից պարտատոմսերի ազատման գործառնությունն առանց գրավատուի կողմից միաժամանակ հիմնական պարտավորության (վարկի) մարման գործառնության իրականացման, ինչպես նաև սույն կարգի 21-րդ կետի «բ» ենթակետում սահմանված դեպքում:

բ) Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը նախաձեռնվում է գրավառուի կողմից, որը իրեն սպասարկող ենթապահառուին է ներկայացնում «Պարտատոմսերի գրավից հանման հանձնարարական»:

գ) Գրավառուի ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը դեպո հաշվառման համակարգում (տվյալ գրավառուի օգտին տվյալ գրավատուի կողմից բավարար ծավալի պարտատոմսերի գրավադրված լինելու փաստի ստուգում): Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

դ) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի դադարեցման այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավառուին սպասարկող ենթապահառուին, իսկ գրավատուին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է գրավառուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

ե) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա գրավատուին (գրավառուին) սպասարկող ենթապահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

զ) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:

է) Եթե գրավառուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա գրավից ազատման դեպո հանձնարարական է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի «դ», «ե», «զ» ենթակետերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

25. Հանդիպակաց դրամական միջոցների փոխանցմամբ պարտատոմսերի գրավից ազատման գործառնություններն իրականացվում են սույն կետում սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

ա) Գրավառուն նախաձեռնում է գրավից պարտատոմսերի ազատման գործառնությունը, որը միաժամանակ ուղեկցվում է գրավատուի կողմից հիմնական պարտավորության (վարկի) մարման գործառնության իրականացմամբ:

բ) Պարտատոմսերի գրավից ազատման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից:

գ) Գրավատուն և գրավառուն իրենց սպասարկող ենթապահառուներին են ներկայացնում «Գրավադրված պարտատոմսերի գրավից հանման հանձնարարական», ենթապահառուի պահառության գործունեության հիմնական պայմաններով սահմանված այլ փաստաթղթեր:

դ) Գրավատուի (գրավառուի) ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում, գրավառուի ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումը ներառում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը, իսկ գրավատուի ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումն ընդգրկում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը ներդրող-գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգումը ենթապահառուի մոտ վարվող ներդրող-գրավատուի դրամական հաշվում, կամ դրամական հաշիվն այլ բանկում գտնվելու դեպքում՝ ենթապահառուին համապատասխան դրամական միջոցների փոխանցման կատարման ստուգումը: Եթե Ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

ե) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է վավերության ստուգում: Անվավերության դեպքում դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն փնտրում է իր կողմից ընդունված դեպո հանձնարարականների բազմությունում տվյալ հանձնարարականի զույգ հանդիսացող հանձնարարականը: Համապատասխան զույգը գտնելու դեպքում պահառուն ստուգում է անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայությունը գրավատուի ենթապահառուի համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, ինչպես նաև բավարար դրամական միջոցների առկայությունը գրավատուին սպասարկող ենթապահառուի՝ բանկում վարվող դրամական հաշվի վրա: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն իրականացնում է դրամական միջոցների փոխանցում բանկում վարվող գրավառուին սպասարկող ենթապահառուի դրամական հաշվի վրա և միաժամանակ պահառուական համակարգում իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ ու գրավի իրավունքի դադարեցման այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավառուին և գրավատուին սպասարկող ենթապահառուին (ենթապահառուներին): Գործառնական օրվա ավարտից հետո

պահառուն գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

զ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա ենթապահառուն (ենթապահառուները) համապատասխան գրառումներ է կատարում իր մոտ վարվող պահառուական համակարգում, իսկ գրավառուին սպասարկող ենթապահառուն իրականացնում է համապատասխան դրամական փոխանցում գրավառուի կողմից նշված հաշվի վրա, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

է) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականները չեն կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

ը) Բոլոր այն դեպո հանձնարարականները, որոնց համապատասխան զույգերը պահառուի կողմից սահմանված ժամանակահատվածում (պահառուի գործառնական օրվա ընթացքում) չեն գտնվում, մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

թ) Եթե գրավատուն և գրավառուն սպասարկվում են միևնույն ենթապահառուի մոտ, ապա ենթապահառուն պարտատոմսերի գրավից ազատման հանձնարարականը ներկայացնում է պահառուին՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող հանձնարարականները ընդունելուց հետո, իսկ պահառուի մոտ դրամական հաշվարկներ չեն իրականացվում, այլ կատարվում են միայն դեպո հաշվառման ձևակերպումներ:

ժ) Եթե գրավատուն և (կամ) գրավառուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի «ե», «զ», «է», «ը», «թ» ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն:

## ԳԼՈՒԽ 4. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ

26. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության չկատարման պարագայում, առանց դատարան դիմելու, գրավատուն հրաժարվում է գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերից (կամ դրանց մի մասից)՝ հանձնելով դրանք ի սեփականություն գրավառուին: Տվյալ գործառնությունը կարող է կատարվել միայն նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրում կամ նոտարական կարգով վավերացված գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում նման պայման սահմանված լինելու դեպքում:
27. Գրավի առարկայից հրաժարման գործառնության դեպքում պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավառուի ազատ դեպո հաշվի վրա, այդ պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքի և գրավառուի գրավի իրավունքի դադարումով և գրավառուի սեփականության իրավունքի ծագումով:
28. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կարող է կատարվել ինչպես գրավադրված պարտատոմսերի ողջ ծավալի, այնպես էլ դրա մի մասի նկատմամբ:
29. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կողմից:
30. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է հետևյալ կերպ՝

ա) գրավատուն իրեն սպասարկող ենթապահառուին է ներկայացնում «Գրավադրված պարտատոմսերից հրաժարման հանձնարարական»:
բ) Գրավատուի ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը ներդրող-գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման, և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:
գ) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, ստուգում է անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայությունը գրավատուի ենթապահառուի համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում և գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայությունն ու ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի դադարման այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավատուին սպասարկող ենթապահառուին, իսկ գրավառուին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է գրավատուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին և գրավառուի ենթապահառուին ուղարկում է քաղվածքներ համապատասխան դեպո հաշիվներից:
դ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա գրավատուին (գրավառուին) սպասարկող ենթապահառուն համապատասխան գրառումներ (հաշվապահական ձևակերպումներ) է կատարում իր մոտ վարվող դեպո հաշվառման համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:
ե) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:
զ) Եթե գրավատուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա «Գրավադրված պարտատոմսերից հրաժարման հանձնարարական» է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի «գ», «դ», «ե» ենթակետերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

## ԳԼՈՒԽ 5. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԻՆ ԳՐԱՎԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

31. Առանց դատարան դիմելու գրավադրված պարտատոմսերի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջների բավարարման գործառնությունը կարող է կատարվել այն դեպքում, եթե այդպիսի գործառնություն նախատեսված է նոտարական կարգով վավերացված գրավադրման պայմանագրում կամ նոտարական կարգով վավերացված գրավատուի և գրավառուի միջև առանձին կնքված համաձայնագրում:
32. Տվյալ գործառնությունն իրականացվում է երկու գործառնությունների միջոցով՝ սույն կարգի 24-րդ կետում սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն գրավառուի կողմից նախաձեռնված գրավից հանման գործառնության և այնուհետև

գրավատուի կողմից երրորդ անձին գրավից հանված պարտատոմսերի վաճառքի գործառնության: Պարտատոմսերի վաճառքի արդյունքում գրավատուին վճարված դրամական միջոցները այնուհետև վերջինիս կողմից փոխանցվում են գրավառուին:

## ԳԼՈՒԽ 6. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

33. Գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի փոխարինման գործառնությունն իրականացվում է այդ դեպքում, երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին, կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում:
34. Գրավի առարկայի փոխարինման դեպքում նախկինում գրավադրված (փոխարինվող) պարտատոմսերի նկատմամբ դադարում է գրավը, որի արդյունքում այդ պարտատոմսերը գրավատուի գրավադրված դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի ազատ դեպո հաշվի վրա, այդ պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարեցմամբ, միաժամանակ փոխարինող պարտատոմսերը գրավադրվում են, որի արդյունքում այդ պարտատոմսերը գրավատուի ազատ դեպո հաշվից փոխանցվում են գրավատուի գրավադրված դեպո հաշվի վրա, փոխարինող պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի գրանցմամբ:
35. Գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի փոխարինումը կարող է կատարվել միայն գրավառուի համաձայնության դեպքում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով այլ բան սահմանված չէ:
36. Գրավի առարկայի փոխարինման դեպքում գրավի պայմանագրում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:
37. Գրավառուի համաձայնությամբ գրավի առարկայի փոխարինման գործառնությունն իրականացվում է սույն կետում սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

ա) գրավառուի համաձայնությամբ գրավի առարկայի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է միաժամանակ գրավատուի և գրավառուի կողմից:

բ) գրավատուն և գրավառուն իրենց սպասարկող ենթապահառուներին են ներկայացնում «Գրավի փոխարինման հանձնարարական», գրավատուն ներկայացնում է նաև փոփոխված գրավի պայմանագիրը.

գ) գրավատուի (գրավառուի) ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ: Ընդ որում, գրավառուի ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումը ներառում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը և փոխարինվող գրավի իրավունքի համապատասխան ծավալի առկայության ստուգումը, իսկ գրավատուի ենթապահառուի կողմից իրականացվող ստուգումը ներառում է դեպո հանձնարարականի վավերության ստուգումը, հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի փոխարինվող պարտատոմսերի առկայության ստուգումը ներդրող-գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում, անհրաժեշտ ծավալի փոխարինող պարտատոմսերի առկայության ստուգումը ենթապահառուի մոտ վարվող ներդրող-գրավատուի ազատ դեպո հաշվում: Եթե գրավատուի (գրավառուի) ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա գրավատուի ենթապահառուն ընդունում է հանձնարարականը կատարման և միաժամանակ ստուգում է համապատասխան գրավի պայմանագրի դրույթները: Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի առարկայի փոխարինում առանց գրավառուի

համաձայնության, ապա գրավատուի ենթապահառուն գործում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված ընթացակարգերի համաձայն: Հակառակ դեպքում գրավատուի ենթապահառուն համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա գրավառուի ենթապահառուն ընդունում է հանձնարարականը կատարման, և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

դ) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է վավերության ստուգում: Անվավերության դեպքում դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն փնտրում է իր կողմից ընդունված դեպո հանձնարարականների բազմությունում տվյալ հանձնարարականի զույգ հանդիսացող հանձնարարականը: Համապատասխան զույգը գտնելու դեպքում պահառուն ստուգում է անհրաժեշտ ծավալի փոխարինվող պարտատոմսերի առկայությունը համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում և գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայությունը, ինչպես նաև փոխարինող պարտատոմսերի առկայությունը համապատասխան ազատ դեպո հաշվում: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ և գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավառուին և գրավատուին սպասարկող ենթապահառուին (ենթապահառուներին): Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածք համապատասխան դեպո հաշիվներից:

ե) Ստացված հաստատման հիման վրա ենթապահառուն (ենթապահառուները) համապատասխան գրառումներ է կատարում իր մոտ վարվող պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն ու գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

զ) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականները չեն կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

է) Բոլոր այն դեպո հանձնարարականները, որոնց համապատասխան զույգերը պահառուի կողմից սահմանված ժամանակահատվածում (պահառուի գործառնական օրվա ընթացքում) չեն գտնվում, մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

ը) Եթե գրավատուն և գրավառուն սպասարկվում են միևնույն ենթապահառուի մոտ, ապա ենթապահառուն գրավի առարկայի փոխարինման հանձնարարականը ներկայացնում է պահառուին՝ իր մոտ գրավատուից և գրավառուից զույգ հանդիսացող հանձնարարականներն ընդունելուց հետո:

թ) Եթե գրավատուն և (կամ) գրավառուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին, որը գործում է սույն կետի «դ», «ե», «զ», «է» ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն:

38. Առանց գրավառուի համաձայնության գրավի առարկայի փոխարինման գործառնությունն իրականացվում է սույն կետում սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

ա) առանց գրավառուի համաձայնության գրավի առարկայի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է միայն գրավատուի կողմից.

բ) գրավատուն իրեն սպասարկող ենթապահառուին է ներկայացնում «Գրավի առարկայի փոխարինման հանձնարարական»:

գ) Գրավատուի ենթապահառուն իրականացնում է սույն կարգի 37-րդ կետի «գ» ենթակետով սահմանված ստուգումները: Եթե գրավատուի ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ստուգում է համապատասխան գրավի պայմանագրի դրույթները: Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի առարկայի փոխարինում առանց գրավառուի համաձայնության, ապա գրավատուի ենթապահառուն իրեն ներկայացված հանձնարարականի և գրավի պայմանագրի կրկնօրինակները կից գրությամբ ներկայացնում է գրավառուի ենթապահառուին՝ խնդրելով տալ գրավի առարկայի փոխարինման հաստատում: Այնուհետև գրավատուի ենթապահառուն գրավառուի ենթապահառուի հետ համաձայնեցված ժամկետում համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

դ) Գրավառուի ենթապահառուն, ստանալով գրավատուի ենթապահառուից գրությունը կից փաստաթղթերով և համոզվելով, որ տվյալ գործառնությունը կարող է իրականացվել առանց գրավառուի համաձայնության, պահառուին ներկայացնում է «Գրավի փոխարինման հանձնարարական»: Եթե գրավառուի ենթապահառուի համոզմամբ տվյալ գործառնությունը չի կարող իրականացվել առանց գրավառուի համաձայնության, նա պարտավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել գրավատուի ենթապահառուին, որից հետո տարաձայնությունները կարգավորվում են անմիջապես գրավատուի և գրավառուի կողմից:

ե) Պահառուն, ենթապահառուներից ստանալով դեպո հանձնարարականները, գործում է սույն կարգի 37-րդ կետի «դ», «ե», «զ», «է» ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն:

39. Եթե ենթապահառուն կամ առևտրային բանկն ինքն է գրավատու կամ գրավառու, ապա նա, ինչպես նաև պահառուն գործում են սույն գլխում նկարագրված ընթացակարգերի համաձայն:

## ԳԼՈՒԽ 7. ԳՐԱՎԱՏՈՒԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

40. Գրավատուի փոխարինման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի:
41. Գրավադրված պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել այլ անձի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ գույքի օտարման պայմանագրի հիման վրա (առուվաճառք, նվիրատվություն և այլն) կամ իրավահաջորդության այլ դեպքերում: Գրավադրված պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձին անցնելու դեպքում գրավադրված պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքը պահպանում է իր ուժը:
42. Գրավատուի փոխարինման դեպքում գրավադրված պարտատոմսերը գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվից փոխանցվում են նոր գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ միևնույն գրավառուի անունով գրավի իրավունքի համապատասխան վերագրանցմամբ:
43. Գրավատուն կարող է վաճառել կամ նվիրել գրավադրված պարտատոմսերը միայն գրավառուի համաձայնության դեպքում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով այլ բան սահմանված չէ: Գրավադրված պարտատոմսերը ժառանգելու, իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքերում գրավառուի համաձայնությունը չի պահանջվում:

44. Պարտատոմսերի գրավատուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է գրավատուի կամ իրավահաջորդության դեպքում՝ պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձի (նոր գրավատուի) կողմից:
45. Տվյալ գործառնության իրականացման ժամանակ գրավատուին անմիջապես սպասարկող ենթապահառուն (պահառուն) պարտավոր է իրականացնել ներկայացված փաստաթղթերի հետևյալ ստուգումները՝
    ա) գրավադրված պարտատոմսերը օտարման արդյունքում այլ անձի սեփականությանն անցնելու դեպքում գրավադրված պարտատոմսերի գրավատուի փոխարինման դեպո հաշվարարականի վրա պետք է առկա լինեն՝ գրավառուի համաձայնությունը արտացոլող գրառում՝ վավերացված գրավառուին սպասարկող ենթապահառուի (պահառուի) կողմից (տվյալ համաձայնությունը չի պահանջվում, եթե օրենքով կամ գրավի պայմանագրով սահմանված է, որ գրավառուի համաձայնությունը չի պահանջվում) և պարտատոմսերի նոր սեփականատեր հանդիսացող անձի (նոր գրավատուի) համաձայնությունը արտացոլող գրառում՝ վավերացված նոր գրավատուին սպասարկող ենթապահառուի (պահառուի) կողմից.
    բ) գրավադրված պարտատոմսերն իրավահաջորդության արդյունքում այլ անձի սեփականությանը անցնելու դեպքում գրավադրված պարտատոմսերի գրավատուի փոխարինման դեպո հաշվարարականին կից պետք է ներկայացված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավահաջորդությունը հավաստող փաստաթղթեր:
46. Գրավատուի փոխարինման գործառնությունն իրականացվում է հետևյալ կերպ՝
    ա) պարտատոմսերի գրավատուն կամ իրավահաջորդության դեպքում՝ պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձը (նոր գրավատուն) գրավատուին սպասարկող ենթապահառուին է ներկայացնում «Գրավատուի փոխարինման հաշվարարական», անհրաժեշտության դեպքում սույն կարգի 45-րդ կետում սահմանված այլ փաստաթղթեր:
    բ) Գրավատուի ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են՝ սույն կարգի 45-րդ կետով սահմանված ստուգումները, ինչպես նաև հօգուտ տվյալ գրավառուի անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգումը գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե գրավատուի ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հաշվարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա գրավատուի ենթապահառուն համապատասխան դեպո հաշվարարական է ներկայացնում պահառուին՝ կցելով ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:
    գ) Պահառուն, ստանալով դեպո հաշվարարականը, ստուգում է անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայությունը գրավատուի ենթապահառուի համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում և գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայությունը, և ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումներ ու գրավի իրավունքի վերաձևակերպման այլ գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավատուին սպասարկող ենթապահառուին, իսկ գրավառուին սպասարկող ենթապահառուին և նոր գրավատուին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է գրավատուի ենթապահառուից ստացված դեպո հաշվարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը՝ կից ներկայացնելով նաև ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն գրավատուի ենթապահառուին և նոր գրավատուի ենթապահառուին ուղարկում է քաղվածքներ համապատասխան դեպո հաշիվներից:

դ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա գրավատուի ենթապահառուն, նոր գրավատուի ենթապահառուն, գրավառուի ենթապահառուն համապատասխան գրառումներ են կատարում իրենց մոտ վարվող պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված և գրավառուն, գրավատուն և նոր գրավատուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, քաղվածք, փաստաթղթերի կրկնօրինակներ) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

ե) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:

զ) Եթե գրավատուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարականը և անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթերը ներկայացնում է անմիջապես պահառուին, որն իրականացնում է սույն կետի «բ» ենթակետում նշված ստուգումները, և դրական արդյունքի դեպքում կատարում է սույն կետի «գ» ենթակետում սահմանված այլ գործողությունները:

## ԳԼՈՒԽ 8. ԳՐԱՎԱՌՈՒԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

47. Գրավառուի փոխարինումը գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքների փոխանցումն է այլ անձի (նոր գրավառուի)՝ պահանջը զիջելու միջոցով պարտատիրոջ իրավունքները այլ անձի անցնելու կանոններին համաձայն:
48. Գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները նոր գրավառուին զիջելը վավեր է, եթե նոր գրավառուին զիջվել է գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը:
49. Գրավառուի իրավունքները նոր գրավառուին անցնելու համար գրավատուի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
50. Գրավառուի փոխարինման դեպքում փոփոխվում են միայն գրավի իրավունքի գրառումները՝ նախկին գրավառուի գրավի իրավունքը դադարում է, այդ գրավի իրավունքը վերագրանցվում է նոր գրավառուի վրա:
51. Գրավառուի փոխարինման գործառնությունը նախաձեռնվում է նախկին գրավառուի կողմից, որը իրեն սպասարկող ենթապահառուին է ներկայացնում գրավառուի փոխարինման դեպո հանձնարարական, ինչպես նաև գրավադրված պարտատոմսերի նկատմամբ նոր գրավառուի իրավունքները հավաստող փաստաթղթեր:
52. Տվյալ գործառնության իրականացման ժամանակ գրավառուին անմիջապես սպասարկող ենթապահառուն (պահառուն) պարտավոր է իրականացնել հետևյալ ստուգումները՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագրի առկայությունը, ըստ որի՝ գրավառուի կողմից գրավի պայմանագրից բխող իր իրավունքները զիջվում են նոր գրավառուին.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կազմված ցեսիայի պայմանագրի առկայությունը, ըստ որի՝ գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը զիջվում է նույն անձին (նոր գրավառուին).

գ) «ա» և «բ» ենթակետերում նշված փաստաթղթերի համապատասխանությունը գրավի պայմանագրին.

դ) եթե օրենքով կամ գրավի պայմանագրով գրավառուի փոխարինման գործառնության համար պահանջվում է գրավատուի համաձայնությունը, ապա գրավառուի փոխարինման դեպո հանձնարարականի վրա պետք է առկա լինի

գրավատուի համաձայնությունն արտացոլող գրառում՝ վավերացված գրավատուին սպասարկող ենթապահառուի (պահառուի) կողմից:

53. Գրավառուի փոխարինման գործառնությունն իրականացվում է սույն կետում սահմանված կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

ա) պարտատոմսերի գրավառուն կամ նոր գրավառուն գրավառուին սպասարկող ենթապահառուին է ներկայացնում «Գրավառուի փոխարինման հանձնարարական»՝ կից այլ անհրաժեշտ փաստաթղթերով:

բ) Գրավառուի ենթապահառուն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի համապատասխան ստուգումներ, որոնք ներառում են 52-րդ կետով սահմանված ստուգումները, ինչպես նաև համապատասխան գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայության ստուգումը: Եթե գրավառուի ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Եթե ստուգման արդյունքը դրական է, ապա գրավառուի ենթապահառուն համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին՝ կցելով ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:

գ) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, ստուգում է անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայությունը գրավատուի ենթապահառուի համապատասխան գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվում և գրավի իրավունքի անհրաժեշտ ծավալի առկայությունն ու ստուգման դրական արդյունքի դեպքում կատարում է գրավի իրավունքի վերաձևակերպման գրառումներ: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում գրավառուին սպասարկող ենթապահառուին, իսկ գրավատուին սպասարկող ենթապահառուին և նոր գրավառուին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է նախկին գրավառուի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակները, որոնք հավաստում են տվյալ գործառնության կատարման փաստը՝ կից ներկայացնելով նաև ներկայացված այլ փաստաթղթերի կրկնօրինակները:

դ) Պահառուից ստացված փաստաթղթերի հիման վրա գրավատուի ենթապահառուն, նախկին գրավառուի ենթապահառուն, նոր գրավառուի ենթապահառուն համապատասխան գրառումներ են կատարում իրենց մոտ վարվող պահառուական համակարգում, որից հետո գործառնությունը համարվում է կատարված, և գրավառուն, գրավատուն և նոր գրավառուն սահմանված փաստաթղթերով (տեղեկանք, փաստաթղթերի կրկնօրինակներ) տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ:

ե) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին, և գործառնությունը համարվում է մերժված:

զ) Եթե գրավառուն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական և անհրաժեշտ այլ փաստաթղթեր է ներկայացնում անմիջապես պահառուին, որն իրականացնում է սույն կետի «բ» ենթակետում նշված ստուգումները և դրական արդյունքի դեպքում կատարում է սույն կետի «գ» ենթակետում սահմանված այլ գործողությունները:

## ԳԼՈՒԽ 9. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄ

54. Գրավադրված պարտատոմսերի մարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորությունները ժամանակին չկատարելու, գրավի առարկան ժամանակին չփոխարինելու կամ այլ դեպքերում պարտատոմսերը տվյալ թողարկման մարման, մասնակի մարման օրվա դրությամբ մնում են գրավի տակ:
55. Գրավադրված պարտատոմսերի մարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պարտատոմսերի ողջ ծավալի մարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է պահառուի կողմից:
56. Գրավադրված պարտատոմսերի մարման դեպքում գրավի առարկա են դառնում մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները, և իրականացվում է գրավի իրավունքի վերաճևակերպում (վերահաշվառում) որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի: Մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները մուտքագրվում են գրավատու ենթապահառուի կամ առևտրային բանկի՝ բանկում վարվող «Գրավադրված պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ» դրամական հաշվի վրա:
57. Եթե մարվող պարտատոմսերի գրավատուն և գրավառուն առևտրային բանկեր են կամ ենթապահառուներ, ապա դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը հաշվառվում է բանկի կողմից՝ սույն կարգի 59-րդ կետով սահմանված ընթացակարգերի համաձայն:
58. Եթե մարվող պարտատոմսերի գրավատուն և (կամ) գրավառուն առևտրային բանկ կամ ենթապահառու չէ, ապա դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը հաշվառվում է գրավատուի և գրավառուի համաձայնությամբ որևէ առևտրային բանկի կողմից՝ սույն կարգի 60-րդ կետով սահմանված ընթացակարգերի համաձայն:
59. Գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի հաշվառումը բանկի կողմից իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները փոխանցվում են «Գրավադրված պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ» հաշվից բանկում գրավատու ենթապահառուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա, և իրականացվում է գրավի իրավունքի վերաճևակերպում (վերահաշվառում)՝ որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի: Հաշվառումը վարվում է ըստ յուրաքանչյուր գրավատուի, գրավառուի և պարտատոմսերի թողարկումների: Գրավատուն և գրավառուն տեղեկացվում են գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների գրավադրման վերաբերյալ: Գրավատուն ստանում է նաև քաղվածք իր հատուկ գրավային դեպոզիտային հաշվից:

բ) Հատուկ դեպոզիտային հաշվի ռեժիմը նույնն է, ինչ գրավատուի գրավադրված պարտատոմսերի դեպո հաշվի ռեժիմը, իսկ այդ հաշվում առկա գրավադրված դրամական միջոցներով կարող են կատարվել սույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխներում սահմանված գործառնությունները նույն պայմաններով:

գ) Գրավից հանման գործառնության դեպքում բանկը գրավառուի հանձնարարականի հիման վրա դրամական միջոցները փոխանցում է հատուկ դեպոզիտային հաշվից գրավատուի՝ բանկում վարվող թղթակցային կամ բանկային հաշվի վրա:

դ) Գրավից հրաժարման դեպքում բանկը գրավատուի հանձնարարականի հիման վրա դրամական միջոցները փոխանցում է հատուկ դեպոզիտային հաշվից գրավառուի՝ բանկում վարվող թղթակցային կամ բանկային հաշվի վրա:

ե) Գրավի բռնագանձման դեպքում բանկը հարկադիր կատարողից ստացված կատարողական թերթի հիման վրա դրամական միջոցները փոխանցում է հատուկ դեպոզիտային հաշվից հարկադիր կատարողի կողմից նշված բանկային հաշվի վրա:

60. Գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի հաշվառումը առևտրային բանկի կողմից իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) բանկը գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները «Գրավադրված պարտատոմսերի մարումից առաջացած միջոցներ» դրամական հաշվից փոխանցում է բանկում բացված գրավատուի ենթապահառուի հատուկ միջանկյալ հաշվի վրա և տեղեկացնում է գրավատուի և գրավառուի ենթապահառուներին: Միաժամանակ բանկն իրականացնում է գրավի իրավունքի վերաձևակերպում (վերահաշվառում) որպես դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքի:

բ) Ոչ ուշ, քան հինգ բանկային օրվա ընթացքում, գրավատուի ենթապահառուն պարտավոր է բանկ ներկայացնել համաձայնագիր, ըստ որի՝ գրավատուն և գրավառուն համաձայնում են առ այն, որ գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները հաշվառվեն երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում. համաձայնագիրը պետք է վավերացված լինի տվյալ առևտրային բանկի կողմից, ինչպես նաև գրավատուի և գրավառուի և վերջիններիս սպասարկող ենթապահառուների կողմից: Համաձայնագրին կից ներկայացվում է միջանկյալ հաշվից դրամական միջոցները փոխանցելու վճարման հանձնարարական:

գ) Ստացված համաձայնագրի և վճարման հանձնարարականի հիման վրա բանկը դրամական միջոցները փոխանցում է միջանկյալ հաշվից գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկի թղթակցային հաշվի վրա, հանում է դրամական միջոցների նկատմամբ գրավի իրավունքը իր հաշվառումից, որի մասին տեղեկացնում է գրավատուի և գրավառուի ենթապահառուներին:

դ) Գրավի իրավունքը հաշվառող առևտրային բանկը բանկային փոխանցման և իրեն ներկայացված համաձայնագրի օրինակի հիման վրա մուտքագրում է դրամական միջոցներն իր մոտ բացված գրավատուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա և հետագայում իրականացնում է այդ գրավի հաշվառման սպասարկումը գրավատուի և գրավառուի հանձնարարականների հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի և (կամ) հարկադիր կատարողի որոշման հիման վրա:

ե) Եթե հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուի կողմից չի ներկայացվում սույն կետի «բ» ենթակետում նշված համաձայնագիրը, ապա բանկը իրավասու է գրավադրված գումարները փոխանցել նոտարի դեպոզիտ՝ միաժամանակ տրամադրելով նոտարին տեղեկություններ գրավադրված գումարների հետ կապված գրավատուի և գրավառուի ենթապահառուների վերաբերյալ:

## ԳԼՈՒԽ 10. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՏՈԿՈՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

61. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ըստ պարտատոմսերի թողարկման պայմանների՝ տվյալ պարտատոմսերի դիմաց թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում վճարվում է արժեկտրոնային կամ տոկոսային եկամուտ (այսուհետ՝ տոկոսներ):

62. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարումն իրականացվում է տվյալ թողարկման տեղաբաշխված պարտատոմսերի ողջ ծավալի տոկոսների վճարման գործառնության հետ միաժամանակ և նախաձեռնվում է պահառուի կողմից:
63. Գրավառուի գրավի իրավունքը տարածվում է գրավադրված պարտատոմսերից ստացված տոկոսների վրա՝ գրավի պայմանագրով նախատեսված դեպքերում: Գրավի պայմանագրում նման պայման սահմանված չլինելու դեպքում տոկոսային կամ արժեկտրոնային եկամուտը պետք է ազատ տնօրինվի գրավատուի կողմից:
64. Գրավադրված պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման գործառնությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) պահառուի կողմից տոկոսները հաշվեգրվում են բանկում վարվող գրավատուի ենթապահառուի հատուկ գրավային դեպոզիտային հաշվի վրա: Գրավատուի ենթապահառուն տեղեկացվում է այդ հաշվի վրա տոկոսների հաշվեգրման վերաբերյալ:

բ) Եթե գրավի պայմանագրով նախատեսված չէ գրավի իրավունքի տարածում գրավադրված պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա գրավատուի ենթապահառուն ներկայացնում է այդ միջոցները բանկում իր թղթակցային կամ բանկային հաշվի վրա փոխանցման վճարման հանձնարարական՝ վավերացված նաև գրավառուի ենթապահառուի կողմից: Բանկի կողմից վճարման հանձնարարականը կատարելուց հետո, գրավատուի ենթապահառուն իրականացնում է այդ տոկոսների վճարումը իր հաճախորդ գրավատուին՝ մուտքագրելով տոկոսների գումարը իր մոտ վարվող գրավատուի դրամական հաշվի վրա, կամ եթե գրավատուի դրամական հաշիվը գտնվում է այլ բանկում՝ իրականացնելով փոխանցում այդ հաշվի վրա:

գ) Եթե գրավի պայմանագրով նախատեսված է գրավի իրավունքի տարածում գրավադրված պարտատոմսերի դիմաց ստացված տոկոսների վրա, ապա գործում են սույն կարգի 9-րդ գլխի պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների համար սահմանված կանոնները:

## ԳԼՈՒԽ 11. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Պարտատոմսերի բռնագանձման գործառնությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով: